



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 3 (39)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Մ Ա Ս
Չ Ա Տ Ի
1

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2006 թվականի սեպտեմբերի 15-ից

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	4, 133
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 135
ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ	19, 146
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	21, 148
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ	23, 150
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	25, 152
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	31
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	33
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	91
ՑՈՒՑԻՉՆԵՐ	119
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	122
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	153

ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	4
<i>Տեղեկություններ 2004 թ. գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին</i>	6

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. (37510) 563-258 отдел приема заявок
 Тел. (37510) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 133
<i>Сведения о выданных патентах.....</i>	<i>6, 135</i>
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	19, 146
<i>Сведения о выданных патентах.....</i>	<i>21, 148</i>
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	23, 150
<i>Сведения о выданных патентах.....</i>	<i>25, 152</i>
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	31
<i>Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания</i>	<i>33</i>
<i>Сведения о продлении действия регистрации товарных знаков.....</i>	<i>91</i>
УКАЗАТЕЛИ.....	119
СООБЩЕНИЯ.....	122
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	153

ЧАСТЬ 2

ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	4
<i>Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 2004 г.</i>	<i>6</i>

CONTENTS

PART 1

INVENTIONS.....	4, 133
<i>Information on granted patents.....</i>	<i>6, 135</i>
UTILITY MODELS.....	19, 146
<i>Information on granted patents.....</i>	<i>21, 148</i>
INDUSTRIAL DESIGNS.....	23, 150
<i>nformation on granted patents.....</i>	<i>25, 152</i>
TRADE MARKS.....	31
<i>Information on registered trade marks and service marks</i>	<i>33</i>
<i>Information on renewal of effect of trademark registration</i>	<i>91</i>
INDEXES.....	119
REPORTS.....	122
TWO-LETTER CODES.....	153

PART 1

TRADE NAMES.....	4
<i>Information on registrated firm name's applications in 2004.</i>	<i>6</i>

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	<i>արտոնագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը</i>
	A1 <i>Գյուտի հիմնական արտոնագիր</i>
	A2 <i>Գյուտի նախնական արտոնագիր</i>
	B2 <i>Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ներկայացման թվականը</i>
23	<i>լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն</i>
24	<i>արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
42	<i>հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը</i>
44	<i>գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
45	<i>գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
51	<i>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</i>
54	<i>գյուտի անվանումը</i>
56	<i>տեղեկատվության աղբյուրներ</i>
57	<i>գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</i>
62	<i>ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</i>
65	<i>հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը</i>
71	<i>հայտատուն, երկրի կոդը</i>
72	<i>գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը</i>
73	<i>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>
85	<i>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը</i>
86	<i>միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը</i>
87	<i>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը</i>

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) **1811** (13) **A2**
A01F 29/00
B02C 13/00
 (21) P20050184 (22) 27.09.2005
 (42) 01.02.2006
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Արմեն Ստեփանի Մարգարյան (AM), Գեորգ Հայկազի Դանիելյան (AM), Արամ Գրիգորի Մազմանյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) Մանրիչ
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաներին, մասնավորապես՝ կերեր մանրացնող սարքերին:

Մանրիչն ունի իրան, բեռնման եւ բեռնաթափման սարքեր, պտտման լիսեռին կապված աշխատանքային դանակ: Դանակի ծայրերին՝ գրոհի անկյունը փոխելու համար, տեղադրված են դրա համաչափության առանցքի նկատմամբ դիրքի փոփոխման հնարավորությամբ թիակներ:

Հնարավորություն է ստեղծվում կարգավորել կերերի մանրացման չափը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1812** (13) **A2**
A01F 29/00
B02C 13/00
 (21) P20050185 (22) 27.09.2005
 (42) 01.02.2006
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Արմեն Ստեփանի Մարգարյան (AM), Գեորգ Հայկազի Դանիելյան (AM), Արամ Գրիգորի Մազմանյան (AM), Արմեն Արշալույսի Աղասարյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

մակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Մանրիչ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաներին, մասնավորապես՝ կերեր մանրացնող սարքերին:

Մանրիչն ունի իրան, որի վրա տեղակայված է մանրացնող նյութի մատուցման բունկեր իր կարգավորիչով: Իրանում տեղակայված է գլանաձեւ մաղ, որի կողային մակերեսային վրա շախմատաձեւ դասավորված են հակակտրիչներ: Ուղղաձիգ էլեկտրաշարժիչի լիսեռի վրա ամրացված է մուրճիկային ռոտոր: Մանրացված նյութը կոնաձեւ հավաքման ուղղատուից լցվում է նրան ամրակցված պարկի մեջ: Ուղղատուն ունի օդատար առվակ:

Ապահովվում է կերերի անարգելք դուրս գալը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1813** (13) **A2**
A23L 1/328

(21) P20050228 (22) 30.12.2005
 (42) 01.03.2006

(71) Ռոբերտ Խաչատրյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM)
 (72) Արա Աբրամյան (RU), Ռոբերտ Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Ժիրայր Աղաջանյան (AM), Հրայր Աղաջանյան (AM), Սերոբ Հովհաննիսյան (AM)
 (73) Ռոբերտ Խաչատրյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM)

(74) Չ. Մանուկյան

(54) Հատիկավոր սել խավիարի փոխարինիչի արտադրության եղանակ

(57) Պատրաստում են սոյայի կաթ, բուսական ծագում ունեցող դոնդողակ գոյացնող նյութ եւ ջուր ներառող խառնուրդ: Խառնուրդը ճնշման տակ տրամաչափարկված անցքերով մատուցում են մինչեւ 45°C ջերմաստիճան տաքացված ձեթ պարունակող անոթի մեջ: Ստացված հատիկներն անջատում են ձեթից եւ լվանում ջրով, 30 րոպեի ընթացքում դաբաղում են թեյի լուծամզուքով եւ լվանում ջրով, ապա մշակում ընկույզից պատրաստված ներկանյութով, լվա-

նում ջրով եւ աղաջրով: Լվացման յուրաքանչյուր փուլից հետո հեռացնում են հատիկների մակերեւույթին մնացած խոնավությունը՝ 15-20 րոպեի ընթացքում դրանք թողնելով մաղի վրա: Արգասիքը համեմում են, կշռածրարում, վերին շերտին քսում ձեթ եւ փաթեթավորում:

Բարելավվում են զգայարանական հատկությունները:

(51) (2006) (11) **1814** (13) **A2**
A23L 1/328
A23P 1/04

(21) P20050229 (22) 30.12.2005
(42) 01.03.2006
(71) Ռոբերտ Խաչատրյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM)
(72) Արա Աբրամյան (RU), Ռոբերտ Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Ժիրայր Աղաջանյան (AM), Հրայր Աղաջանյան (AM), Սերոբ Հովհաննիսյան (AM)
(73) Ռոբերտ Խաչատրյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM)
(74) Ռ. Մանասերյան

(54) Հատիկավոր խավիարի փոխարինիչի արտադրության սարք

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ հատիկավորված սննդամթերք արտադրելու սարքերին:

Սարքն ունի առաջնային խառնուրդի անոթ, որն ունի տաքացիչ: Անոթին խողովակաշարով եւ վենտիլ-խցաններով հաջորդաբար միացված են առաջին պոմպը ու առաջին ջերմափոխանակիչը: Անոթին խողովակաշարով եւ վենտիլ-խցանով միացված է նաեւ առաջնային խառնուրդի բաշխիչը: Առաջնային խառնուրդի բաշխիչի ելքային խողովակների ծայրերին միացված են կաթիլային սարքեր, դրանց տակ տեղադրված է ընդունիչ կիսախողովակ, որը խողովակաշարի եւ երկրորդ ջերմափոխանակիչի միջոցով միացված է երկրորդ պոմպին եւ պատրաստի հատիկների կուտակչին, որն ունի ցանցավոր փոխարինովի տոպրակներ:

Ապահովվում է ստանդարտ չափի հատիկների արտադրությունը, 1սկ.:

(51) (2006) (11) **1815** (13) **A2**
A23L 2/00

(21) P20050226 (22) 29.12.2005
(42) 03.04.2006
(71) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Ռիտա Սուրենի Էմիլյան (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան (AM), Էդուարդ Հրաչիկի Գրիգորյան (AM)
(72) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Ռիտա Սուրենի Էմիլյան (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան (AM), Էդուարդ Հրաչիկի Գրիգորյան (AM)
(73) Բենիկ Նիկոլայի Հարությունյան, Երեւան, Նալբանդյան 17, բն.22 (AM), Ռիտա Սուրենի Էմիլյան, Երեւան, Սիամանթոյի 4, բն.9 (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան, Երեւան, Վաղարշյանի 20/1, բն. 40 (AM), Էդուարդ Հրաչիկի Գրիգորյան, Երեւան, Մաշտոցի պող.5, բն.3 (AM)

(54) Կենսաբանորեն ակտիվ ըմպելիք

(57) Կենսաբանորեն ակտիվ ըմպելիքը ներառում է հանքային ջուր եւ *Lactobacillus acidophilus* 1991 շտամի կուլտուրալ հեղուկ՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %)՝ հանքային ջուր՝ 98,2-99,8, կուլտուրալ հեղուկ՝ 0,2-0,8:

Բարձրացվում են ըմպելիքի հակամանրէային հատկությունները, երկարացվում է պահպանման ժամկետը:

(51) (2006) (11) **1816** (13) **A2**
A61B 17/00

(21) P20060022 (22) 17.02.2006
(42) 03.04.2006
(71) Աննա Պողոսյան (AM), Ռոմեն Ղուկասի Բորոյան (AM), Յուրի Պողոսյան (AM), Լեւոն Գալստոյան (AM), Սիմոն Սամարյան (AM)
(72) Աննա Պողոսյան (AM), Ռոմեն Ղուկասի Բորոյան (AM), Յուրի Պողոսյան (AM), Լեւոն Գալստոյան (AM), Սիմոն Սամարյան (AM)
(73) Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան 25/14, բն. 104 (AM), Ռոմեն Բորոյան, Երեւան, Նազարեթ Սուրենյանի 1, բն.38 (AM), Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Լեւոն Գալստոյան, Երեւան, Սարմենի 92, բն.31 (AM), Սիմոն Սամարյան, Երեւան, Մուկոյան 28, բն. 87 (AM)

(54) Պարօղոնտի հիվանդությունների տեղային բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ պարօղոնտի հիվանդությունների տեղային բուժման եղանակներին:

Համաձայն եղանակի, լնդերը մշակում են բաղադրանյութով, որը ներառում է ակնամոմ, չիչխանի յուղ, մեխակի յուղ, պղպեղային դաղձի յուղ, կալանխոեի հյութ եւ դոնդողանյութ՝ համապատասխանաբար բաղադրամասերի 1, 0:0,5:0,25:0,25:1,0:0,2 գանգվածային հարաբերակցությամբ: Բաղադրանյութն օգտագործում են քսուքի կամ լնդային վիրակապի ձեւով:

Կրճատվում է բուժման տեւողությունը եւ երկարաձգվում ռեմիսիայի ժամկետը:

(51) (2006) (11) **1817** (13) **A2**
A61B 17/58

- (21) P20050227 (22) 30.12.2005
- (42) 03.04.2006
- (71) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)
- (72) Արմեն Վաչագանի Այվազյան (AM), Վաչե Գեւորգի Համբարձումյան (AM)
- (73) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)
- (74) Է. Նահապետյան

(54) Ողնաշարի տրանսպեդիկուլային սեւեռիչ-ճշտիչ (տարբերակներ)

(57) Գյուտը վերաբերում է վիրաբուժական սարքերին եւ կարող է օգտագործվել ողնաշարի վնասվածքների կամ կորացումների տրանսպեդիկուլային օստեոսինթեզի համար:

Սեւեռիչ-ճշտիչն ունի մետաղաձող եւ դրա վրա առանցքային ուղղությամբ տեղաշարժման եւ սեւեռման հնարավորությամբ նստեցված, սուր ծայրով պտուտակ կրող կողպեք: Կողպեքն ունի երկայնական եւ լայնական անցքերով վեցանիստի տեսք: Երկայնական անցքում տեղադրված է սրածայր պտուտակ, որի գլխիկը տեղակայված է կողպեքի ներսում, իսկ սուր ծայրը ցցված է դեպի դուրս, իսկ լայնական անցքում՝ կողպեքը սեւեռող մանեկներով պտուտակավոր մետաղաձող: Կողպեքի լայնական անցքի հետին մասի տրամագիծը հավասար է պտուտակի գլխիկի տրամագծին:

Սեւեռիչ-ճշտիչի մյուս տարբերակում կողպեքն ունի լայնական անցքով վեցանիստի

տեսք, որտեղ տեղադրված է կողպեքը սեւեռող մանեկներով պտուտակավոր մետաղաձող, իսկ կողային պատին ամրակցված է ծայրին մանեկ ունեցող սռնի եւ դրա վրա նստեցված բռնիչ: Բռնիչն ունի պտուտակի տեղադրման երկայնական անցք եւ երկայնական միջանցիկ ակոս:

Ընդլայնվում են ողնաշարի վիրահատության տեխնիկական հնարավորությունները, կրճատվում է վիրահատական միջամտության ժամանակը, 2 անկախ կետ, 5 նկ.:

(51) (2006) (11) **1818** (13) **A2**
A61C 7/00

- (21) P20050208 (22) 18.11.2005
- (42) 01.02.2006
- (71) Պավել Դանիելի Մայիլյան (AM)
- (72) Պավել Դանիելի Մայիլյան (AM)
- (73) Պավել Դանիելի Մայիլյան, Երեւան, Վահր. Փափագյան 22, բն. 21 (AM)

(54) Ատամնաալվեոլային աղեղի շտկման եղանակ

(57) Օրթոդոնտիկ ապարատը հարմարակցում են ատամների վրա, պարբերաբար ակտիվացնում են այն՝ ազդելով ատամների վրա համընթաց եւ պտտողական լարումներով, եւ պարբերաբար հանում են: Պարբերաբար ակտիվացումների միջակայքում ապարատի զարգացրած լարումները բազմակի անգամ հանում են եւ ատամների վրա ազդում են ծամիչ մկանների ուժերով:

Բարձրանում է ատամնաալվեոլային աղեղի շտկման արդյունավետությունը, 7 նկ.:

(51) (2006) (11) **1819** (13) **A2**
A61C 8/00
A61B 17/00

- (21) P20060021 (22) 17.02.2006
- (42) 03.04.2006
- (71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
- (72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
- (73) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Աննա Պողոսյան, Երեւան,

Նալբանդյան 25/14, բն. 104 (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Համբարձումյան 18, բն.41 (AM)
(54) Վերին ծնոտային ծոցի հատակի բարձրացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային եւ կարող է օգտագործվել վերին ծնոտի ատամների պրոթեզավորման համար:

Համաձայն եղանակի՝ բացակայող ատամների շրջանում ատամնաբնային ելունի կատարով հատում են լորձաթաղանթը: Ծնոտի ոսկորը մերկացնում են եւ վերին ծնոտային ծոցի հատակը լցնում ոսկրագոյացումը խթանող բաղադրանյութով, որը ներառում է նորածին խոճկորների մանրացված ապահանքայնացված ոսկորներից պատրաստված մատրիքս եւ հիվանդի երակային արյունից ստացված տրոմբոցիտներով հարստացված պլազմա՝ 1:1 զանգվածային հարաբերակցությամբ:

Բարձրացվում է եղանակի արդյունավետությունը:

(51) (2006) (11) **1820** (13) **A2**
A61C 19/00

(21) P20050222 (22) 23.12.2005

(42) 03.04.2006

(71) Աննա Ռուբենի Վարդանյան (AM)

(72) Աննա Ռուբենի Վարդանյան (AM)

(73) Աննա Ռուբենի Վարդանյան, Երեւան, Սայաթ-Նովայի 15, բն. 64 (AM)

(54) Ախտորոշիչ մոդելների վրա ատամների թեքության անկյան որոշման սարք

(57) Գյուտը վերաբերում է ատամնաբուժական սարքավորումներին եւ կարող է կիրառվել ախտորոշիչ մոդելների վրա ատամների թեքության անկյան որոշման համար:

Սարքն ունի ուղղահայաց կանգնակով հիմք, ատամների մոդելի տեղակայման հարթակ եւ անկյունաչափ: Անկյունաչափն ունի հաշվանքի հակառակ ուղղությամբ լրացուցիչ սանդղակ, ատամի մակերեսային հետ հավող շարժուն սլաք եւ կանգնակի հետ կապված է ուղղահայաց տեղաշարժման եւ հորիզոնական առանցքի շուրջը պտտվելու հնարավորությամբ: Որպես ատամների մոդելի տեղակայման հարթակ ծառայում է հիմքի մակերեսային հատվածը, որը երկու կից կողմերից սահմանափակված է մակերեսային ցցված թիթեղներով:

Պարզեցվում է ատամների թեքության անկյան չափումը, նվազեցվում է աշխատատարությունը, հնարավորություն է ստեղծվում չափել ամբողջ ատամնաշարի թեքության անկյունը, 2 նկ.:

(51) (2006) (11) **1821** (13) **A2**
A61F 9/00

(21) P20050223 (22) 23.12.2005

(42) 01.03.2006

(71) Ադրինե Բորիսի Ավետիսյան (AM), Ահարոն Ռոբերտի Գաբրիելյան (AM)

(72) Ադրինե Բորիսի Ավետիսյան (AM), Ահարոն Ռոբերտի Գաբրիելյան (AM)

(73) Ադրինե Բորիսի Ավետիսյան, Երեւան, Ներսիսյան 6ա, բն. 54 (AM), Ահարոն Ռոբերտի Գաբրիելյան, Երեւան, Ազատության պող. 14, բն. 20 (AM)

(54) Աչքի առաջնային խցիկի հեղուկի արտահոսման սարք

(57) Գյուտը վերաբերում է ակնաբուժությանը, մասնավորապես՝ աչքի բուժման սարքերին:

Սարքն ունի օդակ դարձող սիլիկոնե խողովակ, որի մի ծայրը լայնացված է մյուս ծայրը մոցնելու համար: Խողովակի միջին հատվածում բացված են երկայնակի ուղղությամբ ճառագայթային անցքեր:

Ապահովվում է վնասվածքների նվազեցումը, 5 նկ:

(51) (2006) (11) **1822** (13) **A2**
A61F 13/04

(21) P20050221 (22) 22.12.2005

(42) 01.03.2006

(71) Գեւորգ Մաքսիմի Զարամյան (AM)

(72) Գեւորգ Մաքսիմի Զարամյան (AM)

(73) Գեւորգ Մաքսիմի Զարամյան, Լոռու մարզ, Վանաձոր, Տիգրան Մեծի 15/15 (AM)

(54) Գիպսակապի պատրաստման սարք

(57) Գյուտը վերաբերում է վնասվածքաբուժության բնագավառում օգտագործվող միջոցներին՝ կտրվածքների շրջանն անշարժեցնելու համար:

Սարքն ունի վիրակապի տեղադրման հարմարանք եւ ջրի անոթ: Վիրակապի տեղադրման հարմարանքն ունի Ո-աձև բռնակով միացված

երկու զուգահեռ հենարանային զուլակ եւ դրանց միջեւ տեղադրված երկու կալակ՝ վիրակապերի համար: Հենարանային զուլակներից մեկն ունի կալակների մի ծայրերի տեղադրման ակոսներ, իսկ մյուս հենարանային զուլակի վրա ամրացված են կալակների երկրորդ ծայրերը սեղմող երկու զսպանակալծակային սեղմիչ մեխանիզմներ: Ընդ որում սեղմիչ մեխանիզմները կապված են շարժաբեր լծակների հետ, որոնք ներդրված են բռնակի վրա ամրակցված ճարմանդի ուղղորդիչ անցքերի մեջ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը եւ պահովվում կիրառման հարմարավետությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) **1823** (13) **A2**
A61K 35/32

(21) P20060020 (22) 17.02.2006
(42) 03.04.2006
(71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Սիմոն Սամարյան (AM), Հայկ Հարությունյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Սիմոն Սամարյան (AM), Հայկ Հարությունյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր հարբերդ 10/14 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան 25/14, բն. 104 (AM), Սիմոն Սամարյան, Երեւան, Մոսկովյան 28, բն. 87 (AM), Հայկ Հարությունյան, Վանաձոր, Թումանյան 9ա, բն. 15 (AM)

(54) **Ոսկրաստեղծման խթանիչ բաղադրանյութ**

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական պատրաստուկներին եւ կարող է կիրառվել դիմաձևոտային վերականգնողական վիրաբուժությունում: Առաջարկվող բաղադրանյութը ներառում է նորածին խոճկորների ապահանքայնացված ոսկրային մատրիքս եւ հիվանդի երակային արյունից տրոմբոցիտներով հարստացված պլազմա՝ 1:1 զանգվածային հարաբերակցությամբ:

Ընդլայնվում է ոսկրագոյացումը խթանող բաղադրանյութերի տեսականին:

(51) (2006) (11) **1824** (13) **A2**
A61N 5/06
A61M 31/00

(21) P20060002 (22) 09.01.2006
(42) 01.03.2006
(71) Նունե Մարտունիի Աբրահամյան (AM), Միհրան Խաչիկի Շահբազյան (AM)
(72) Նունե Մարտունիի Աբրահամյան (AM), Միհրան Խաչիկի Շահբազյան (AM)
(73) Նունե Մարտունիի Աբրահամյան, Երեւան, Ա.հաչատրյան 12, բն. 63 (AM), Միհրան Խաչիկի Շահբազյան, Երեւան, Ազատության պող. 10, բն. 35 (AM)

(54) **Բազմաֆունկցիոնալ բժշկական լազերային սարք**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ ատամնաբուժությանը:

Բազմաֆունկցիոնալ բժշկական սարքն ունի սնուցման ու լազերային ճառագայթման աղբյուր եւ համալիր ազդեցության գործիք: Լազերային ճառագայթման աղբյուրը կիսահաղորդչային արսենիդ-գալիումային լազեր է: Գործիքը կազմված է դեղամիջոցի ռեզերվուարից, վիրատորից, վիրատորին ամրակցված ու անցուղի ունեցող ծայրակալից, պոմպից եւ լազերային ճառագայթման աղբյուրից արտածման լուսատարից: Սարքը լրացուցիչ ունի էլեկտրաֆորեզ իրականացնող էլեկտրոդներ, որոնք միացված են կառավարման վահանին:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, 3 նկ.:

(51) (2006) (11) **1825** (13) **A2**
A63B 63/00

(21) P20050214 (22) 07.12.2005
(42) 01.03.2006
(71) Հովհաննես Պողոսի Թարվերդյան (AM)
(72) Հովհաննես Պողոսի Թարվերդյան (AM)
(73) Հովհաննես Պողոսի Թարվերդյան, Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր, Սեւակի 2, բն. 4 (AM)

(54) **Ֆուտբոլային խաղի դարպաս**

(57) Գյուտը վերաբերում է ֆիզիկական կուլտուրային եւ սպորտին, մասնավորապես՝ ֆուտբոլային խաղերի դարպասներին:

Դարպասն ունի վերադրակի միջոցով մի-

մյանց կապված երկու ուղղաձիգ կանգնակներ եւ դրանց վրա ամրակցված ցանց: Վերադրակի վրա ամրացված են միեւնույն երկարութուն ունեցող եւ դեպի դաշտն ուղղված ցանցով ձգված հորիզոնական ուղղանկյուն շրջանակ եւ դրա նկատմամբ անկյան տակ տեղակայված թափանցիկ անդրադարձիչ: Շրջանակի լայնությունը 2 մ է: Թափանցիկ անդրադարձիչն ունի 0.75մ լայնություն եւ տեղակայված է 77° անկյան տակ:

Լայնացվում են խաղի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006) (11) **1826** (13) **A2**
B01D 24/02

(21) P20050176 (22) 14.09.2005
(42) 04.01.2006
(71) Համլետ Յայկի Հակոբյան (AM)
(72) Համլետ Յայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)
(73) Համլետ Յայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)
(54) **Հոսքաջրերի մաքրման սարք**
(57) Գյուտը վերաբերում է հոսքաջրերի մաքրման սարքերին, մասնավորապես՝ լողացող լցվածքով գտիչ սարքերին:

Սարքի ուղղաձիգ գլանաձեւ իրանն ունի դեպի վեր նեղացվող վերին մաս, ստորին մաս եւ դրանց միջեւ տեղադրված հարթ ծակոտկեն միջնորմ: Միջնորմի տակ ներլցված է լողացող հատիկավոր գտանյութի լցվածք: Միջնորմի ծակոտիների չափերը փոքր են լողացող լցանյութի հատիկների չափերից: Իրանի վերին մասի բկանցքում տեղադրված է ցնցուղ: Լողացող լցանյութի լցվածքը փքած պեռլիտ է, որի խտությունը 4-10 անգամ փոքր է մաքրվող հոսքաջրի խտությունից:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, բարձրացվում է ջրի մաքրման արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1827** (13) **A2**
B01J 39/00
C02F 1/28

(21) P20050174 (22) 14.09.2005
(42) 04.01.2006

(71) Համլետ Յայկի Հակոբյան (AM)
(72) Համլետ Յայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)
(73) Համլետ Յայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Հոսքաջրերի մաքրման գտանյութի ստացման եղանակ**

(57) Ծակոտկեն լեռնային ապարը ենթարկում են ջերմային մշակման, ընդ որում որպես ծակոտկեն լեռնային ապար օգտագործում են ջրազրկված տուֆ, պեռլիտ, պեմզա, ցեոլիթ, բենտոնիտ, քվարցային ավազ կամ փայլար, իսկ ջերմային մշակումը կատարում են 100-600°C ջերմաստիճանում:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում են գտանյութի մաքրող հատկությունները:

(51) (2006) (11) **1828** (13) **A2**
B21D 22/26

(21) P20050207 (22) 18.11.2005
(42) 01.02.2006
(71) Էռնեստ Աղաջանի Նազարյան (AM)
(72) Էռնեստ Աղաջանի Նազարյան (AM), Միլետա Մարտիրոսի Առաքելյան (AM)
(73) Էռնեստ Աղաջանի Նազարյան, Երեւան, Միկոյան 2, բն. 23 (AM)

(54) **Միաբյուրեղների աճեցման արկղի պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է թերթային մոլիբդենից նավակաձեւ արկղի պատրաստման եղանակներին եւ կարող է կիրառվել հորիզոնական ուղղված բյուրեղացման համար:

Համաձայն միաբյուրեղների աճեցման արկղի պատրաստման եղանակի պատրաստում են ձեւավոր նախապատրաստված թերթային մոլիբդենից եւ դրա ուրվագծի հետ համընկնող նախապատրաստված թերթային պողպատից: Թերթային պողպատից պատրաստված նախապատրաստվածքը տեղադրում են դրոշմի մեջ, որի վրա պահպանելով համաչափությունը, տեղադրում են մոլիբդենից պատրաստված նախապատրաստվածքը: Այնուհետեւ նախապատրաստվածքների պարագծով ստեղծում են ջերմային դաշտ, ապա նախապատրաստվածքները դեֆորմացնում են խոր արտաձգմամբ:

Պարզեցվում է նավակաձեւ արկղի պատ-

րաստման տեխնոլոգիան, երկարացվում է ծառայության ժամկետը եւ բարձրացվում է միաբյուրեղների պիտանի ելքը, 2 նկ.:

(51) (2006) (11) **1829** (13) **A2**
C01B 33/00

(21) P20060012 (22) 30.01.2006
(42) 01.03.2006

(71) Վլադիմիր Նիկոլայի Օվչինյան (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան (AM), Յուլյա Ռուբենի Ստեփանյան (AM), Մելիդա Ֆրունզեի Կոստանոյան (AM)

(72) Վլադիմիր Նիկոլայի Օվչինյան (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան (AM), Յուլյա Ռուբենի Ստեփանյան (AM), Մելիդա Ֆրունզեի Կոստանոյան (AM)

(73) Վլադիմիր Նիկոլայի Օվչինյան, Երեւան, Սունդուկյան 28ա, բն. 35 (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն. 33 (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան, Երեւան, Երեւան, Մելքումովի 39, բն. 1 (AM), Յուլյա Ռուբենի Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի պող. 2-րդ նրբ. 15 (AM), Մելիդա Ֆրունզեի Կոստանոյան, Երեւան, Վահր. Փափազյան 16ա, բն. 66 (AM)

(54) Գերմանրատված սիլիցիումի երկօքսիդի ստացման եղանակ

(57) Սիլիկատային ալկալիական լուծույթը մշակում են ամոնիումի քլորիդի ջրասպիրտային լուծույթով սենյակային շերմաստիճանում, պարզեցնում խառնուրդը, ծծանցում սիլիցիումի երկօքսիդի նստվածքը, լվանում տաք թորած ջրով եւ չորացնում այն:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում է սիլիցիումի երկօքսիդի դիսպերսայնությունը:

(51) (2006) (11) **1830** (13) **A2**
C02F 1/40

B01D 39/00
(21) P20050171 (22) 14.09.2005
(42) 01.03.2006

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM)
(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)
(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) Կեղտաջրերի գտման սարք

(57) Կեղտաջրերի գտման սարքն ունի ուղղաձիգ տեղակայված գլանաձեւ իրան, դրան վերելից միակցված վերին կոնական հատվածամաս եւ մաքրվող ջրի մուտքի խողովակաոստ, իսկ ներքեւից՝ ստորին կոնական հատվածամաս եւ մաքրված ջրի ելքի խողովակաոստ, ընդ որում վերին եւ ստորին կոնական հատվածամասերը հանովի են: Մաքրվող ջրի մուտքի խողովակաոստի եւ վերին կոնական հատվածամասի միջեւ տեղադրված է ջրաբաշխիչ հանգույց հանդիսացող ցնցուղ: Իրանի մեջ տեղակայված են երկու ծակոտած հորիզոնական միջնորմներ՝ դրանց միջեւ տեղադրված շերտավոր գտող տարրով, ընդ որում գտող տարրն իրականացված է հատիկավոր փքած պեռլիտի լցվածքի տեսքով: Լցվածքի շերտերն առնվազն երեքն են եւ դասավորված են ներքեւից վերեւ ըստ հատիկների չափերի մեծացման, ընդ որում հատիկների չափերը մեծ են ծակոտած միջնորմների անցքերի չափերից, իսկ փքած պեռլիտի լցվածքի խտությունը փոքր է մաքրվող եւ մաքրված ջրերի խտությունից:

Բարձրացվում է կեղտաջրերի մաքրման արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1831** (13) **A2**
C02F 1/40
E02B 15/04

(21) P20050173 (22) 14.09.2005
(42) 04.01.2006

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM)
(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)
(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) Ջրի մակերեւույթից նավթամթերքի հավաքման սարք

(57) Սարքն ունի տեղափոխման միջոցին կապված հավաքիչ տարողություն, որը պատրաստված է ցանցից: Ցանցի անցքերը փոքր են ջրի մակերեւույթի վրա փեշեցրած գտակայութեւրի հատիկների չափերից: Հավաքիչ տարողությունը կարող է լինել շերտիաձեւ, տաշտաձեւ, կիսագնդաձեւ, պարկաձեւ կամ կիսագլանաձեւ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 5 նկ.:

(51) (2006) (11) **1832** (13) **A2**
C04B 28/10

(21) P20050216 (22) 07.12.2005
(42) 01.03.2006
(71) Գեւորգ Կոմիսարի Յայրապետյան (AM), Ղուկաս Արմայիսի Գրիգորյան (AM)
(72) Գեւորգ Կոմիսարի Յայրապետյան (AM), Ղուկաս Արմայիսի Գրիգորյան (AM)
(73) Գեւորգ Կոմիսարի Յայրապետյան, Երեւան, Արաբկիրի 17-րդ փող. 25, բն.22 (AM), Ղուկաս Արմայիսի Գրիգորյան, Երեւան, Մուշափանի 1, բն.21 (AM)

(54) **Բետոնի չոր խառնուրդ եւ դրա ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել դեկորատիվ տարրեր պատրաստելու, մասնավորապես՝ ճանապարհային գունավոր սալիկներ ստանալու համար:

Խառնուրդը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. % ցեմենտ՝ 43-47, լցանյութ՝ 48-50, գունանյութ՝ 3-4, հավելանյութեր. կալցիումի օքսիդ՝ 1.0-1.5 եւ մագնեզիումի օքսիդ՝ 1.0-1.5:

Խառնուրդի ստացման եղանակը կայանում է նրանում, որ սկզբում գնդավոր աղացում վեց ժամ խառնում են ցեմենտը եւ գունանյութը, ապա ավելացնելով հավելանյութը խառնում են եւս երկու ժամ, որից հետո աղացը անջատում են: Աղացի պարունակությունը աղացի գնդերի հետ միասին դատարկում են թրթռամաղի վրա, գունավոր ցեմենտային խառնուրդը առանձնացնում գնդերից, որից հետո խառնուրդը հետ են լցնում աղացի մեջ, ավելացնում են լցանյութը եւ խառնում եւս մեկ ժամ:

Բարձրացվում է խառնուրդից ստացվող սալիկների մաշակայունությունը, 2 անկախ կետ:

(51) (2006) (11) **1833** (13) **A2**
C07C 21/00
C07C 7/00

(21) P20060004 (22) 12.01.2006
(42) 01.03.2006
(71) Գրիգոր Սամսոնի Գրիգորյան (AM), Ռուբեն Եղիշի Սաղաթեյան (AM)

(72) Գրիգոր Սամսոնի Գրիգորյան (AM), Ռուբեն Եղիշի Սաղաթեյան (AM)

(73) Գրիգոր Սամսոնի Գրիգորյան, Երեւան, Մ.Սարյան 33, բն.22 (AM), Ռուբեն Եղիշի Սաղաթեյան, Երեւան, Այգեճորի 37 (AM)

(54) **Քլորոպրենի արտադրության խեժային կաթսային մնացորդների մշակման եղանակ**

(57) Խեժային կաթսային մնացորդները խառնում են ջրի հետ մակերեւութաակտիվ նյութի կամ պոլիմերային դիսպերսարարի եւ օքսիդացման ռեակցիայի ակտիվարարի առկայությամբ, խառնուրդի մեջ մատուցում են թթվածին կամ օդ, տաքացնում են անընդհատ խառնման պայմաններում pH 2-12 արժեքում մինչեւ լուծիչի լիակատար թորումը եւ համապոլիմերների գոյացման պրոցեսի ավարտը:

Ապահովվում է լուծիչի լիակատար վերարտադրումը:

(51) (2006) (11) **1834** (13) **A2**
C12N 1/20

(21) P20050220 (22) 22.12.2005
(42) 01.02.2006
(71) Աստղիկ Չավենի Փեփոյան (AM)
(72) Աստղիկ Չավենի Փեփոյան (AM)
(73) Աստղիկ Չավենի Փեփոյան, Երեւան, Ազատության պող. 11, բն. 10 (AM)

(54) **Escherichia coli մանրէների շտամ «ԱՍՍՓ», որն օգտագործվում է պրոբիոտիկ պատրաստուկի ստացման համար եւ այդ շտամի հիմքով պրոբիոտիկ պատրաստուկ**

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային եւ կարող է կիրառվել պրոբիոտիկների արտադրության համար:

Escherichia coli մանրէների շտամը անջատված է առողջ մարդու աղիներից: Շտամը ախտածին չէ, թունային եւ թունածին հատկություններ չունի: Շտամը օգտագործվում է պրոբիոտիկ պատրաստուկի ստացման համար:

Պրոբիոտիկի օգտագործումը կարգավորող ազդեցություն է գործում աղիքի միկրոֆլորայի վրա եւ պահպանում է մարսողական ուղու բարենպաստ մանրէական հաշվեկշիռը, 2 անկախ կետ:

- (51) (2006) (11) **1835** (13) **A2**
C22B 5/02
- (21) P20060003 (22) 11.01.2006
(42) 03.04.2006
(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Վիլենա Յակոբի Մարտիրոսյան (AM), Մարինե Էդուարդի Սասունցյան (AM), Ժորա Յրաչի Ղուկասյան (AM), Մարիետա Շուրայի Շմավոնյան (AM), Տիմեյա Սերյոժայի Աղամյան (AM), Զրիստինե Լեւոնի Չաքարյան (AM)
(73) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
- (54) **Երկաթի համաձուլվածքի ստացման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է մետաղագործությանը, մասնավորապես՝ երկաթի համաձուլվածքների ստացմանը եւ կարող է օգտագործվել լեգիրող հավելանյութերի ստացման համար:
Պատրաստում են սուլֆիդային խտանյութի, ֆեռոսիլիցիումի, կալցիումի օքսիդի եւ նատրիումի նիտրատի 100:(28-32):(26-30):(8-12) զանգվածային հարաբերակցությամբ բովախառնուրդ, որն ենթարկում են ջերմասինթեզի: Գործընթացում զարգանում է 2500-2600°C ջերմաստիճան, որի արդյունքում առաջանում է երկաթի համաձուլվածք հանդիսացող մետաղական ֆազ:
Պարզեցվում է եղանակը եւ հնարավորություն է ստեղծվում օգտագործել տեղական սուլֆիդային հումքը:
-
- (51) (2006) (11) **1836** (13) **A2**
C22C 9/10
- (21) P20050219 (22) 21.12.2005
(42) 01.02.2006
(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Վիլենա Յակոբի Մարտիրոսյան (AM), Մարինե Էդուարդի Սասունցյան (AM), Ժորա Յրաչի Ղուկասյան (AM), Մարիետա Շուրայի Շմավոնյան (AM), Տիմեյա Սերյոժայի Աղամյան (AM)
(73) «Յայաստանի պետական ճարտարագիտա-

կան համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) **Պղնձի հիմքով համաձուլվածք**

(57) Գյուտը վերաբերում է մետալուրգիային եւ կարող է օգտագործվել կոնստրուկցիոն նյութերի արտադրության մեջ: Յամաձուլվածքը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. երկաթ՝ 20-30, ազոտ՝ 0.10-0.12, սիլիցիում՝ 1.8-3.0, պղինձ՝ մնացածը:
Բարձրացվում է համաձուլվածքի կոռոզիակայունությունը եւ պլաստիկությունը:

- (51) (2006) (11) **1837** (13) **A2**
C30B 7/00
G02F 1/00
- (21) P20060001 (22) 08.01.2006
(42) 03.04.2006
(71) Ռուբեն Ալբերտի Ափրեյան (AM), Յարություն Արշալույսի Կարապետյան (AM), Արամ Մելքումի Պետրոսյան (AM)
(72) Ռուբեն Ալբերտի Ափրեյան (AM), Յարություն Արշալույսի Կարապետյան (AM), Արամ Մելքումի Պետրոսյան (AM)
(73) Ռուբեն Ալբերտի Ափրեյան, Արարատի մարզ, Մասիս, Նոր-թաղ, 39, բն.30 (AM), Յարություն Արշալույսի Կարապետյան, Երեւան, Ավան, Մարշալ Բաբաջանյան 10, բն.16 (AM), Արամ Մելքումի Պետրոսյան, Երեւան, Բակունցի 2, բն.83 (AM)
- (54) **L - նիտրոարգինինի տրիկլինային բյուրեղային ձեւ, դրա ստացման եղանակ եւ L - նիտրոարգինինի միաբյուրեղի աճեցման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է բյուրեղների աճեցմանը, որոնք կարող են օգտագործվել, մասնավորապես՝ լազերային ճառագայթման հաճախության վերափոխման եւ էլեկտրասթատիկական մոդուլացման համար, բժշկության մեջ եւ այլ նպատակներով: L-նիտրոարգինինի նոր բյուրեղային ձեւը պատկանում է տրիկլինային համակարգի տարածական համաչափության P1 խմբին:
L-նիտրոարգինինի տրիկլինային բյուրեղային ձեւի բյուրեղացումը կատարում են ուժեղ թթվով թթվեցրած ջրային լուծույթից: L-նիտրոարգինինի միաբյուրեղները աճեցնում են

լուծույթից օգտագործելով L-նիտրոարգինիկ տրիկլինային բյուրեղային ձեւը որպես բյուրեղախայծ:

Ստացվում է նոր L-նիտրոարգինիկ տրիկլինային բյուրեղային ձեւ, 3 անկախ կետ, 5 նկ.:

(51) (2006) (11) **1838** (13) **A2**
E02B 15/04

(21) P20050170 (22) 14.09.2005

(42) 01.03.2006

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Գագիկ Յուլիանի Վարդերեսյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

(54) **Ջրավազանի մակերեսային սալաքարերի հավաքման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ջրագտման սարքերին:

Ջրավազանի մակերեսային սալաքարերի հավաքման սարքն ունի իրան եւ նրա մեջ տեղակայված գտող նյութի հատիկավոր լցվածք: Իրանը պատրաստված է ջրանցիկ ցանցից, իսկ որպես գտող նյութի հատիկավոր լցվածք օգտագործված է փքած պեռլիտ, որի խտությունը 5-8 անգամ փոքր է մաքրվող եւ մաքրված ջրերի խտությունից, ընդ որում ցանցի անցքերի մեծությունը փոքր է գտող նյութի հատիկների չափերից:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, բարձրացվում է նրա կլանունակությունը, 5 նկ:

(51) (2006) (11) **1839** (13) **A2**
E21C 47/10

(21) P20050210 (22) 29.11.2005

(42) 01.03.2006

(71) Ջոն Ալեքսանի Ասատրյան (AM)

(72) Ջոն Ալեքսանի Ասատրյան (AM), Խորեն Գառնիկի Սուվարյան (AM)

(73) Ջոն Ալեքսանի Ասատրյան, Գյումրի, Մ.Խորենացու 24, բն.4 (AM)

(54) **Քարի արդյունահանման մեքենա**

(57) Գյուտը վերաբերում է քարամշակմանը, մասնավորապես՝ մինչեւ 40 ՄՊա ամրության

ապառներից կանոնավոր ձեւի որմնաքարերի արդյունահանմանը:

Մեքենան ունի քառանկյալին ինքնաշարժ շրջանակ, դրա վրա տեղակայված թափք, որում կա գերբարձր ճնշման ջրային շիթ ստանալու տեղակայանք: Թափքի վրա մեքենան ունի շրջուն գլխիկ եւ հենոց: Հենոցում տեղակայված է սահնակ, որի մի ծայրին գտնվում է լայնական կտրումներ իրականացնող, միջծայրափողակային հեռավորության կարգավորման հնարավորությամբ, բազմածայրափողակային գլխիկ, իսկ մյուս ծայրին՝ երկայնական կտրում իրականացնող գլխիկ, որը ներբանային կտրում կատարող ալմաստային սկավառակով է: Քարի թիկունքային կտրումը իրականացվում է ալմաստային սկավառակի նկատմամբ տրված դիրք գրավող ջրաշիթային ծայրափողակով:

Մեքենան ապահովում է տարբեր չափերի կանոնավոր ձեւի որմնաքարերի ստացումը, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս նվազեցնել քարամշակման ժամանակ առաջացող թափոնների քանակը, 6 նկ.:

(51) (2006) (11) **1840** (13) **A2**
F16C 35/00
D01H 7/00

(21) P20050203 (22) 14.11.2005

(42) 01.02.2006

(71) Աշոտ Պապոյան (AM), Հայաստան Չախալյան (AM)

(72) Աշոտ Պապոյան (AM), Հայաստան Չախալյան (AM)

(73) Աշոտ Պապոյան, Գյումրի, 26 Կոմիսարների 60 (AM), Հայաստան Չախալյան, Գյումրի, Աբովյան փող. 1-ին նրբ. 143 (AM)

(54) **Ռոտորի հենարանային հանգույց**

(57) Գյուտը վերաբերում է իլերի հենարաններին:

Հանգույցն ունի անշարժ սնամեջ իրան, որում առանցքակալների վրա տեղակայված է միջանկյալ ռոտոր: Դրա մեջ առանցքակալների վրա տեղակայված է շարժաբերային ռոտոր, որը կցորդիչով եւ կենտրոնավորող տարրով համառանցք միացված է հիմնական ռոտորին: Հիմնական ռոտորը տեղակայված է առաձգական սկավառակներից կազմված հենարանում, որն ունի ռոտորի առանցքային ուղղությամբ տեղաշարժման հնարավորություն:

Ապահովվում է հիմնական ռոտորի տատա-
նումների լայնույթի եւ սկավառակային հենարա-
նում դինամիկական բեռնվածքի նվազեցման
հնարավորություն, 3 նկ.:

(51) (2006) (11) **1841** (13) **A2**
F16D 55/02

(21) P20060036 (22) 09.03.2006
(42) 03.04.2006

(71) Նորիկ Ավետիսի Բագիկյան (AM), Վանիկ Սամ-
վելի Ավայան (AM), Կարո Զակոբի Մոսիկյան (AM)
(72) Նորիկ Ավետիսի Բագիկյան (AM), Վանիկ Սամ-
վելի Ավայան (AM), Կարո Զակոբի Մոսիկյան (AM)
(73) Նորիկ Ավետիսի Բագիկյան, Երեւան, Ման-
թաշյան 4/5, բն. 7 (AM), Վանիկ Սամվելի Ավա-
յան, Աբովյան, 3-րդ միկրոշրջան 26, բն. 12 (AM),
Կարո Զակոբի Մոսիկյան, Երեւան, Ռաֆֆու 93,
բն. 60 (AM)

(54) **Սկավառակավոր արգելակման մեխա-
նիզմ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը,
մասնավորապես ավտոմոբիլների սկավառակա-
վոր արգելակներին:

Սկավառակավոր արգելակման մեխանիզմն
ունի կալունակ, սուպորտ, կոճղակներ իրենց մա-
կադրակներով, սկավառակ եւ շարժաբեր: Կա-
լունակն ունի սեպածեւ առվակ, որի մեջ սահե-
լու հնարավորությամբ տեղակայված է սուպոր-
տը, իսկ սկավառակի վրա արված են եզրալայն-
ված անցքեր:

Նվազեցվում է կոճղակների մակադրակնե-
րի մաշումը, ապահովվում է սկավառակի հո-
վացումը, 4 նկ.:

(51) (2006) (11) **1842** (13) **A2**
F16D 57/00

(21) P20050197 (22) 31.10.2005
(42) 01.02.2006

(71) «Չայաստանի պետական ագրարային
համալսարան» պետական ոչ առետրային կազ-
մակերպություն (AM)
(72) Գրիգորի Զենրիկի Մանասարյան (AM),
Նորիկ Ավետիսի Բագիկյան (AM), Գեորգի Զով-
հաննեսի Ասատրյան (AM)

(73) «Չայաստանի պետական ագրարային
համալսարան» պետական ոչ առետրային կազ-
մակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Չարվածացիկային բեռնվածքի տվիչ**

(57) Գյուտը վերաբերում է փորձարկիչ տեխնի-
կային եւ կարող է օգտագործվել ներքին այր-
ման շարժիչների ծնկածեւ լիսեռի վրա արգելա-
կային մոմենտ ստեղծելու համար, երբ շարժիչը
աշխատում է ստենդի վրա:

Չարվածացիկային բեռնվածքի տվիչն ու-
նի իրան եւ մղակ, որն ունի առանցքային ու
կողմնային անցուղիներ եւ տեղադրված է իրա-
նի մեջ: Իրանն ունի իր ստորին հատվածամա-
սում գտնվող ելքի խողովակաոստ եւ առանց-
քային շեղումով տեղակայված ճնշումային խո-
ղովակաոստ: Մղակն ունի նաեւ իրեն կոշտ ամ-
րակցված թեւանիվներ, իսկ իր ստորին հատ-
վածամասում՝ խտարարներ եւ երկու հոլովակ-
ներ, ընդ որում հոլովակները տեղակայված են
իրանի մեջ տեղադրված եւ երկու իրար համա-
չափ բռունցքային ելուններ ունեցող զսպանա-
կած օղակի մակերեւույթի վրայով գլորվելու
հնարավորությամբ: Իրանի վերին հատվածա-
մասին ամրակցված է կափարիչ, որի վրա տե-
ղակայված են առանցքային տեղաշարժի հնա-
րավորություն ունեցող ասեղը եւ տարաթողման
կափույրը:

Փորձարկման ռեժիմները մոտեցվում են շա-
հագործականին, 7 նկ.:

(51) (2006) (11) **1843** (13) **A2**
G01L 5/00

(21) P20060016 (22) 13.02.2006
(42) 03.04.2006

(71) Էդվարդ Գեւորգի Գալտազազյան (AM)
(72) Էդվարդ Գեւորգի Գալտազազյան (AM),
Բորիս Չինավորի Սադյան (AM), Զրայր Լյութ-
վիգի Կարապետյան (AM), Վարդան Ավետիքի
Թովմասյան (AM)
(73) Էդվարդ Գեւորգի Գալտազազյան, Կոտայքի
մարզ, Աբովյան, Ռոսիա 6, բն. 30 (AM)

(54) **Մկանային ուժի չափման սարք**

(57) Գյուտը վերաբերում է մկանային ուժի չափ-
ման սարքերին:

Սարքն ունի հենման տարրի վրա տեղա-
դրված ուժաչափ: Իրանի մեջ տեղադրված է

Էլեկտրամեխանիկական եւ ժամանակի տվիչներ, որոնք էլեկտրական կապով միացված են կառավարման-ցուցադրման հանգույցին:

Բարձրացվում է չափման ճշտությունը, որոշվում է ընթացիկ ուժի կիրառման ժամանակը եւ պայթուցիկ ուժի կիրառման սկզբից մինչեւ մաքսիմալ մեծությանը հասնելու ժամանակը, 2 նկ.:

(51) (2006) (11) **1844** (13) **A2**
G01N 21/47
G01W 1/00

(21) P20050218 (22) 20.12.2005
(42) 01.03.2006

(71) Ռուբեն Սիմոնի Ասատրյան (AM)
(72) Ռուբեն Սիմոնի Ասատրյան (AM), Անուշավան Յակարամի Մակարյան (AM), Յայկ Գեւորգի Գեւորգյան (AM), Յամլետ Սուրենի Կարայան (AM), Յովհաննես Վարդանի Յովհաննիսյան (AM), Սիմոն Ռուբենի Ասատրյան (AM), Մարտին Նշանի Միսակյան (AM)
(73) Ռուբեն Սիմոնի Ասատրյան, Երեւան, Սիսակյան 2, բն.305 (AM)

(54) **Մթնոլորտի սպեկտրային թափանցիկության չափիչ համակարգ**

(57) Մթնոլորտի սպեկտրալ թափանցիկության չափիչ համակարգն ունի օպտիկական առանցքներով միմյանց նկատմամբ 45 աստիճան անկյան տակ տեղակայված լուսավորիչի եւ լուսաչափի հանգույցներ: Լուսաչափի հանգույցն ունի, իր առանցքի շուրջը պտտվող 0,35-1,03մկմ ալիքային երկարությունների ընդգրկությունում հինգ ինտերֆերենցիոն նրբաշերտ լուսազտիչների սկավառակ: Լուսավորիչի եւ լուսաչափի համագույցների միջեւ տեղակայված են մթնեցված եւ պաշտպանիչ Էկրաններ, կաթնապակյա հսկիչ-ցրիչ:

Ընդլայնվում են համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, 1նկ.:

(51) (2006) (11) **1845** (13) **A2**
G01N 33/48

(21) P20060009 (22) 26.01.2006
(42) 03.04.2006

(71) Յովհաննես Չավենի Նաղաշյան (AM), Անուշ

Ռաֆիկի Յակոբյան (AM), Վահան Բաբկենի Անդրեասյան (AM), Օլեգ Վալերիի Շչերբակով (AM), Տիգրան Ժիրայրի Չիթչյան (AM)

(72) Յովհաննես Չավենի Նաղաշյան (AM), Անուշ Ռաֆիկի Յակոբյան (AM), Վահան Բաբկենի Անդրեասյան (AM), Օլեգ Վալերիի Շչերբակով (AM), Տիգրան Ժիրայրի Չիթչյան (AM)

(73) Յովհաննես Չավենի Նաղաշյան, Երեւան, Սարյան 33, բն. 34 (AM), Անուշ Ռաֆիկի Յակոբյան, Երեւան, Գուսան Շերամի 113, բն. 84 (AM), Վահան Բաբկենի Անդրիասյան, Երեւան, Ա. Խաչատրյան 2ա, բն. 14 (AM), Օլեգ Վալերիի Շչերբակով, Երեւան, Տիգրան Մեծի պող. նրբ. 10, բն. 15 (AM), Տիգրան Ժիրայրի Չիթչյան, Երեւան, Տիգրան Մեծի 31, բն. 194 (AM)

(54) **Ճիճվային հիվանդությունների ախտորոշման եղանակ**

(57) Կոկոնաքի նմուշը խառնում են ջրի հետ, ստացված կախույթը քամում մետաղյա ցանցով եւ կենտրոնախուսում: Ստացված վերնստվածքային հեղուկը հեռացնում են, իսկ նստվածքին ավելացնում են ազոտաթթվական նատրիումի, ծծմբաթթվական մագնեզիումի հագեցած ջրային լուծույթներ եւ գլիցերին ներառող խառնուրդ, խառնում եւ կրկին կենտրոնախուսում 3-5 րոպեի ընթացքում 8000պտ/րոպ արագությամբ: Յեղուկի մակերելույթին առաջացած թաղանթը ուսումնասիրում են մանրադիտակով:

Բարձրացվում է ախտորոշման հավաստիությունը:

(51) (2006) (11) **1846** (13) **A2**
G01V 7/00

(21) P20050225 (22) 28.12.2005
(42) 03.04.2006

(71) ՅՅ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոն պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)
(72) Յրանտ Ազիզբեկյան (AM), Յրայր Ազիզբեկյան (AM), Էդվարդ Յարությունյան (AM), Ռաֆայել Ղազարյան (AM)

(73) ՅՅ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոն պետական ոչ առետրային կազմակերպություն, Արագածոտնի մարզ, Աշտարակ-2, Գիտական-2 (AM)

(54) Թեքվաձքների չափման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անկյունային չափումների բնագավառին, մասնավորապես՝ սեյսմոլոգիայում կիրառվող թեքվաձքների չափման օպտիկական եղանակներին, եւ կարող է օգտագործվել փոքրածավալ հորատանցքային թեքաչափերում՝ ընթացիկ սեյսմիկ վտանգը գնահատելու համար:

Ըստ հայտարկվող եղանակի գրանցում են երկու տարրերի միջեւ անկյան փոփոխությանը համապատասխանող չափաբերված լուսային ազդանշանը եւ դրա մշակմամբ որոշում են թեքվաձքի մեծությունը: Տարրերից առաջինը ամրակցված է ազատ կախված ուղղաձիգ ճոճանակի վրա, իսկ երկրորդը՝ մեխանիկական տեղաշարժերի աղբյուրին: Առաջին տարր հանդիսացող լուսադիոդից արձակվող ճառագայթը կիզակետում են երկրորդ տարր հանդիսացող լիցքային կապով սարքի զգայուն մակերեւութի վրա, իսկ որպես մշակվող տեսաազդանշան վերցնում են լույսի բծի կոորդինատների փոփոխությունը:

Մեծացվում են շեղման չափումների դիսամիկ տիրույթը եւ թեքվաձքների չափման զգայունությունը, փոքրացվում է ճոճանակի երկարությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1847 (13) A2
H01F 1/00
B01J 20/30

(21) P20060010 (22) 27.01.2006
(42) 01.03.2006

(71) Սերգեյ Սուրենի Յայրապետյան (AM)
(72) Սերգեյ Սուրենի Յայրապետյան (AM), Գոհար Արայի Ավետիսյան (AM), Յամբարձում Գուրգենի Խաչատրյան (AM)

(73) Սերգեյ Սուրենի Յայրապետյան, Երեւան, Զեռնիշենսկու 58, բն.1 (AM)

(54) Մագնիսական հատկություն ունեցող սորբենտի ստացման եղանակ

(57) Մագնիսական հատկություն ունեցող փոշու մասնիկների մակերեւույթը պատում են սիլիկահողային թաղանթով, մշակում թաղանթով պատած փոշին, թրծում 900-1000°C ջերմաստիճանում, ապա խառնում դիատոմիտի, բենտոնիտի եւ ակտիվացրած ածխի կամ ակտիվացրած ածխի աղբյուր հանդիսացող բաղադրանյութի հետ, խառնումը շարունակում են մինչեւ համասեռ զանգվածի ստանալը, զանգվածը հատիկավորում են, չորացնում 120-150°C ջերմաստիճանում եւ կրկին թրծում 500-800°C ջերմաստիճանում 1-3 ժամվա ընթացքում, ընդ որում մագնիսական փոշին կոբալտի կամ նիկելի ֆեռիտ է:

Պարզեցվում է սորբենտի ստացման եղանակը, բարելավվում են դրա կլանող հատկությունները:

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԳԵԼՆԵՐ

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	<i>արտոնագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը</i> U <i>օգտակար մոդելի արտոնագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ներկայացման թվականը</i>
23	<i>լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
45	<i>օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
51	<i>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</i>
54	<i>օգտակար մոդելի անվանումը</i>
56	<i>տեղեկատվության աղբյուրներ</i>
57	<i>ռեֆերատը</i>
62	<i>ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</i>
71	<i>հայտատուն, երկրի կոդը</i>
72	<i>օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը</i>
73	<i>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>
85	<i>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը</i>
86	<i>միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը</i>
87	<i>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը</i>

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) **118** (13) **U**
A24F 19/00
 (21) U20060125 (22) 25.07.2006
 (71) Յրաչյա Յարուբյունյան (AM)
 (72) Յրաչյա Յարուբյունյան (AM)
 (73) Յրաչյա Յարուբյունյան, Երեւան, Վարդա-
 նանց 73 (AM)

(54) **Մոխրաման**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է ծխելու պարագաներին, մասնավորապես՝ մոխրաման-
 ներին, որոնք կարող են ամրակցվել պատին:

Մոխրամանն ունի սնամեջ իրան, որի մեջ հեռացվելու հնարավորությամբ տեղադրված է ներդիր, որը իր ծայրամասային կցաշուրթերով հենված է իրանի վերին եզրին: Իրանը կիպ փակվում է կափարիչով, որը իրանին կապված է հողակապորեն եւ զսպանակած է: Իրանի կողմերից մեկի արտաքին մակերեւոյթին ամրակցված է երկկողմանի կաչուն տարր: Ներդիրն ունի սիգարետի հանգքման փորվածք ունեցող ընդարձակված հատվածամասով լայնական հարթակ, որի ծայրերն ամրակցված են ներդիրի երկայնական կողմերի պատերի ներքին մակերեւոյթի վերին մասում: Մոխրամանի իրանը պատրաստված է պլաստմասսայից, իսկ ներդիրը՝ ջերմակայուն նյութից:

Բարձրացվում է մոխրամանից օգտվելու հարմարությունը, իջեցվում է մոխրամանի ինքնարժեքը, 7 նկ.:

(51) (2006) (11) **119** (13) **U**
B65B 29/00
 (21) U20060138 (22) 03.08.2006
 (71) Ժիրայր Վիլյամի Զարամյան (AM), Յայկ Գագիկի Ադամյան (AM), Ազատ Էդուարդի Բեգլարյան (AM)
 (72) Ժիրայր Վիլյամի Զարամյան (AM), Յայկ Գագիկի Ադամյան (AM), Ազատ Էդուարդի Բեգլարյան (AM)
 (73) Ժիրայր Վիլյամի Զարամյան, Երեւան, Արաբկիրի 39-րդ փող. 2, բն.7 (AM), Յայկ Գագիկի Ադամյան, Երեւան, Յ.Յակոբյան 9/1, բն.35 (AM), Ազատ Էդուարդի Բեգլարյան, Երեւան, Ավան

թաղամաս, Բրյուսովի հատված 70, բն.15 (AM)
 (54) **Չոր սրճային ըմպելիքով բաժնեվորված գտիչ-փաթեթ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է չոր սրճային ըմպելիքով լցված միանգամյա օգտագործման գտիչ փաթեթներին:

Չտիչ-փաթեթը պարունակում է աղացած բնական սուրճ եւ լուծվող սուրճ: Լուծվող սրճի զանգվածը փաթեթի մեջ կարող է կազմել 8-50% կամ 50-90%:

Լայնացվում է սրճային ըմպելիքների տեսականին, հարստացվում են համային հատկու-
 թյունները:

(51) (2006) (11) **120** (13) **U**
B65D 47/00

(21) U20050157 (22) 20.01.2005
 (85) 16.08.2005
 (86) PCT/RU 2004/000504, 20.01.2005
 (87) WO2006/036085A1 06.04.2006
 (71) Օրշէստովո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեն-
 նոստյու «Գլետչեր Ինվեստ» (RU)
 (72) Անդրեյ Պրոզումենշիկով (RU)
 (73) «Գլետչեր Ինվեստ» ՍՊԸ (RU)
 (74) Յ. Դավթյան

(54) **Խցանման սարք**
 (57) Օգտակար սարքը վերաբերում է շշերի խցանման սարքերին:

Սարքն ունի դատարկման փողակով ներքին թասակ, դատարկման փողակի փակման խցա-
 փակիչով հեղուկաթափ ականոց, թամբով եւ փականային տարրով հանովի փական, ելքի ծայրին բացման ցուցանշման միջոց ունեցող արտաքին թասակ: Ցուցանշման միջոցն ար-
 ված է պոկովի տարրի կամ հեշտ քայքայվող հոծ միջակապի ձեւով: Փականային տարրը պատ-
 րաստված է հանովի փականի թամբին դրա կիպ հպումը ապահովող նյութից:

Ապահովվում է շշերի խցանման հուսալի-
 ությունը, նվազեցվում է դրանց կրկնական լցման հնարավորությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) **121** (13) **Ս**
F03D 3/00
 (21) U20060043 (22) 24.03.2006
 (71) Չարեհ Վարդանյան (AM), Ալեքսան Չալիկյան (US)
 (72) Չարեհ Վարդանյան (AM), Ալեքսան Չալիկյան (US)
 (73) Չարեհ Վարդանյան, Երեւան, Չարյան 126 (AM), Ալեքսան Չալիկյան, 15933 Բասեթսթրիթ Վան Նյու Քալիֆորնիա, 91406 ԱՄՆ (US)
